

# Ֆինանսներ և Էկոնոմիկա. Հայաստան

թիվ 4(93)  
ապրիլ, 2008

## Հայաստանի բիզնես մրցունակությունը

Այս աշխատանքում ներկայացվում են մրցունակության բարձրացման կարևորությունը տնտեսության հեռանկարային զարգացման գործում, Հայաստանի այսօրվա բիզնես մրցունակության վիճակը, բիզնես մրցունակության դիրքերի վատթարացման պատճառները, խնդրահարույց գործոնների վերացման համար անհրաժեշտ բարելավումների բնույթը և իրականացման հերթականությունը, ինչպես նաև այդ գործընթացում պետություն-մասնավոր համագործակցության կարևորությունը:

**Առանցքային բառեր**՝ բիզնես մրցունակություն, ազգային բիզնես միջավայր, «Ադամանդի» մոդել, քլաստեր, մրցակցային առավելություն:

Այսօր ցանկացած զարգացող երկրի արագ և որակյալ առաջընթացի համար անհրաժեշտ է օտարերկրյա ներդրումներ տնտեսության հեռանկարային ոլորտներում: ՀՀ ներդրումային քաղաքականությունը ընդհանուր տնտեսական քաղաքականության բաղկացուցիչ մասն է կազմում և դիտարկվում է որպես տնտեսության զարգացման կարևորագույն միջոցներից մեկը: Ռազմավարության մեջ ամրագրված ներդրումային քաղաքականությունը նպատակաուղղված է ներդրումային և գործարար բարենպաստ միջավայրի ձևավորմանը, կարգավորող միջավայրի թափանցիկության բարձրացմանը, երկրի մրցակցային առավելությունների բացահայտմանը, Հայաստանում իրականացվող ներդրումների ծավալների մեծացմանը, շուկայական ենթակառուցվածքների զարգացմանը և դրանց հիման վրա տնտեսական երկարատև կայուն զարգացման հասնելուն:<sup>[1]</sup>

Չնայած նրան, որ ՀՀ ներդրումների նկատմամբ հայտարարվել և իրականացվում է "բաց դռների" քաղաքականություն, և այս ազատական մոտեցումն ամրագրվել է օրենսդրության մեջ, մասնավորապես՝ 1994թ.-ին ընդունված "Օտարերկրյա ներդրումների" մասին ՀՀ օրենքում, 2005թ.-ին հաստատված "ՀՀ ներդրումային քաղաքականության" հայեցակարգում, ներդրումների ներգրավման առաջնային խնդիր է մնում բիզնես միջավայրի որակը և երկրի մրցունակությունը բացահայտող ցուցանիշների բարելավումը, քանի որ ներկայումս առաջատար ընկերությունները տարբեր երկրներում ներդրումներ անելու վերաբերյալ որոշումներ կայացնելիս մեծապես առաջնորդվում են վերոնշյալ ցուցանիշների համակարգով:

Այս հետազոտության նպատակն է բացահայտել և ուսումնասիրել բիզնես միջավայրի որակի հիմնական թերությունները և առաջարկել վերջինիս բարելավման մի շարք քայլեր և ուղիներ՝ հիմնվելով տեսական մոտեցումների և միջազգային փորձի վրա:

### **Բիզնես մրցունակության ինդեքս**

Այսօր երկրի մրցունակությունը բնութագրող ցուցանիշները համարվում են ավելի համապարփակ ցուցանիշներ, քան տնտեսական աճի տեմպը: Այդ է պատճառը, որ ազգային մրցունակությունը դարձել է յուրաքանչյուր երկրի կառավարության և ճյուղի մտահոգության առարկա: Չնայած բազմաթիվ բանավեճերի և քննարկումների, չկա ազգային մրցունակության միանշանակ մեկնաբանություն: Մի խումբը երկրի մրցունակությունը դիտարկում է որպես մակրոտնտեսական երևույթ, որը կարգավորվում է այնպիսի գործոններով, ինչպիսիք են փոխարժեքը, տոկոսադրույքը և բյուջեի դեֆիցիտը: Մյուսները արտահայտում են այն համոզմունքը, որ մրցունակությունը կապված է ժամ աշխատուժի ավելցուկի կամ բնական հարուստ պաշարների առկայության հետ: Չնայած բերված մեկնաբանություններից յուրաքանչյուրում կա ճշմարտության որոշակի մասնիկ, սակայն տարբեր երկրներում դրսևորվող գործնական արդյունքները հանդիսանում են ազդեցիկ հակափաստարկներ վերջիններիս: Այս սահանումներից ոչ մեկը լիարժեք չէ պետության ներսում որևէ ճյուղի մրցունակությունը ռացիոնալ բացատրելու համար:


Վերը նշված պնդումներից արդյոք կարելի հետևություն անել և մրցունակ համարել այն երկիրը , որտեղ յուրաքանչյուր ընկերություն կամ արդյունաբերական ճյուղ մրցունակ է: Այսպիսի բնորոշմանը չի համապատասխանում ոչ մի երկիր: Նույնիսկ ճապոնիայում կան տնտեսության նշանակալից ոլորտներ, որոնք բավականաչափ հետ են մնում իրենց միջազգային մրցակիցներից:

Ազգային մակարդակով մրցունակության միակ խելամիտ կոնցեպցիան դա **արտադրողականությունն** է, իսկ փուլային կտրվածքով **տարանջատվում է մրցունակության զարգացման երեք փուլ**՝ ռեսուրսների վրա հիմնված, ներդրումների վրա հիմնված և նորարարությունների վրա հիմնված:<sup>[2]</sup>Նշենք, որ **Հայաստանը իր բնութագրիչներով գտնվում է առաջին և երկրորդ փուլերի միջև**: Ցանկացած պետության հիմնական նպատակն է հասնել իր քաղաքացիների բարձր և անընդհատ աճող բարեկեցության մակարդակի: Այդ նպատակի իրագործումը կախված է արտադրողականությունից, որն էլ իր հերթին ապահովում են երկրի կողմից գործարկվող կապիտալի և աշխատանքային ռեսուրսների հաշվին: Բարեկեցության մակարդակը կոնկրետ երկրում կախված է ազգային ընկերությունների կողմից արտադրողականության բարձր մակարդակի հասնելու և այն անընդհատ բարձրացնելու

ունակությունից: Սակայն ընկերությունների արդյունավետ գործելու, բարձր արտադրողականության հասնելու և նորարարություններ իրականացնելու համար որպես նախապայման անհրաժեշտ է արտաքին որակյալ բիզնես միջավայր: Վերջինս հանդիսանում է նաև ներդրումային ներհույս ապահովող առանցքային գործոն: Այդ միջավայրի բնութագրիչներ են երկրի ֆիզիկական ենթակառուցվածքները, մարդկային ռեսուրսները, ֆինանսական շուկաները և այլն:

Ընդունելով բիզնես միջավայրի կարևոր դերը տնտեսության զարգացման գործում՝ մրցունակության համաշխարհային ինդեքսի հետ համատեղ մշակվել է նաև **բիզնես մրցունակության ինդեքսը**, որը բնութագրում է բիզնես միջավայրի որակը և ընկերությունների ընթացիկ գործունեությունն ու ռազմավարությունը, որոնք միմյանց հետ սերտորեն փոխկապակցված են (**Նկար 1**): Ինդեքսը հաշվարկվում է խմբավորելով Համաշխարհային մրցունակության զեկույցում ընդգրկված ցուցանիշները 2001-2006թթ. կտրվածքով, որոնց հիման վրա հաշվարկվում են համապատասխան ենթաինդեքսները՝ բիզնես միջավայրի որակ 15 ցուցանիշներ և ընկերությունների ընթացիկ գործունեություն և ռազմավարություն 43 ցուցանիշներ : Այնուհետև վերցվում են ենթաինդեքսներում ընդգրկված ցուցանիշների և յուրաքանչյուր երկրի 1 շնչին ընկնող ՀՆԱ-ի ռեգրեսիոն գործակիցները յուրաքանչյուր ենթաինդեքսի կշիռը ստանալու համար (0.825 և 0.175): Վերջնական ինդեքսը ստացվում է համապատասխան կշիռներով կշռված ենթաինդեքսների գումարով:

**Նկար 1. Բիզնես մրցունակության ինդեքսի կառուցվածքը և բաղադրիչները**



Այսպիսով ԲՄՀ -ն ընդգրկում է այն հիմնական պայմանները , որոնց առկայությունը և փոխգործակցությունը երկրի համար ապահովում է բիզնես մրցունակության բարձր մակարդակ: Վերոնշյալ բաղադրիչների գնահատման և համադրման հիման վրա մշակվել է համապատասխանաբար ազգային բիզնես միջավայրի և Ընկերությունների

գործունեության և ռազմավարության ենթահիմնքները, որոնց թվաքանական միջինով էլ որոշվում է երկրի զբաղեցրած դիրքը ԲՄՀ դասակարգման մեջ: Ստորև ներկայացվում է ԲՄՀ դասակարգումը ԱՊՀ երկրների համար 2006 և 2007 թվականներին՝ ընդգրկելով նաև յուրաքանչյուր երկրում մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի մակարդակը: Հետազոտություն մեջ կդիտարկենք ՀՀ- ում բիզնես միջավայրի առավել խոցելի և թերի կողմերը , դրանց ազդեցությունը գործարար ակտիվության վրա և կներկայացնենք դրանց բարելավման անհրաժեշտ քայլերը:

Աղյուսակ 1. ԱՊՀ երկրների ԲՄՀ դասակարգումը 2006-2007թթ.

ԱՊՀ երկրներ	ԲՄՀ դասակարգում		Ազգային բիզնես միջավայրի որակի դասակարգում		Ընկերությունների գործունեության և ռազմավարության դասակարգում		Մեկ շնչին ընկնող ՀՆԱ (գնողունակության պարիտետով հաշվարկված)
	2007	2006	2007	2006	2007	2006	2006
Ղազաստան	72	65	72	65	78	72	9.370
<i>Ադրբեջան</i>	78	72	81	73	72	67	7.990
Ռուսաստանի դաշնություն	71	73	70	71	77	77	12.186
Ուկրաինա	81	77	83	77	82	75	7.680
Մոլդովա	99	87	99	86	101	87	2.740
Հայաստան	108	91	106	89	115	92	5.650
<i>Տաջիկստան</i>	104	97	107	96	103	104	1.388
Վրաստան	100	92	100	92	93	93	4060
Ղրղզստան	116	105	116	105	110	98	2.130

**Ծանոթություն.** շեղատառերով նշված երկրները տվյալների կայունության թեսթի պահանջներին չեն բավարարել: Դրանց տվյալները պետք է մեկնաբանվեն վերապահումով:

Գործարար մրցունակության առումով Հայաստանի դիրքն արտացոլում է այլ (համանման) երկրների համեմատությանը Հայաստանում միկրոտնտեսական պայմանների վատթարացումը (2006-ի համեմատ նվազում 17 կետով): Ընդ որում ազգային բիզնես միջավայրի որակի և ընկերությունների գործունեության և ռազմավարության ենթահիմնքները իջել են համապատասխանաբար 7 և 23 կետերով: Այս անկումը կարելի է բացատրել երեք տարբեր գործոններով՝

1. Ցուցակում նոր երկրների ընդգրկմամբ
2. Հայաստանի ցուցանիշից ներքև գտնվող երկրների դիրքի բարելավմամբ
3. Հայաստանի բնութագրերի վատթարացմամբ

Մեր վերլուծության շեշտը, անշուշտ, դրվելու է երրորդ գործոնի վրա, այն է՝ բնութագրերի թույլ կողմերի բացահայտում և բարելավման ուղղված առաջարկությունների մշակում:

Վերլուծությունը հիմնվելու է հայտնի ամերիկյան տնտեսագետ, Չարվարդի համալսարանի պրոֆեսոր Մայքլ Պորտերի մշակած մոդելի վրա, որը ստացել է "Ադամանդի" մոդել անվանումը: Այս մոդելը պատասխանում է այն հարցին թե ինչպես, ինչ պայմանների առկայությամբ են ընկերությունները, ճյուղը հետևաբար և տվյալ երկիրը ձեռք բերում մրցակցային առավելություններ: Այդ հարցերի պատասխանը ներառված է երկրի չորս հիմնական հատկանշական բնութագրերում: Դրանցից յուրաքանչյուրը առանձին և միասին վերցրած կազմում են երկրի մրցակցային առավելությունների հիմքը: Այդ հայտանիշներն են.

**1. Արտադրական գործոններ.** Երկրի դիրքը արտադրության այնպիսի գործոններում, ինչպիսիք են բնական ռեսուրսները, որակյալ աշխատուժը կամ ենթակառուցվածքները, որոնք անհրաժեշտ են տվյալ ճյուղում մրցակցային պայքար մղելու համար:

**2. Պահանջարկի պայմաններ.** Ներքին շուկայում պահանջարկի բնութագիրը ճյուղային արտադրանքի կամ ծառայության նկատմամբ:

**3. Օժանդակ և հարակից ճյուղեր.** Տվյալ երկրում միջազգային մակարդակով մրցունակ մատակարար կամ այլ հարակից ճյուղերի առկայությունը կամ բացակայությունը:

**4. Ռազմավարություն, ճյուղային կառուցվածք և մրցակցություն.** Ընկերությունների ստեղծման, կազմակերպման և կառավարման գոյություն ունեցող պայմանները, ինչպես նաև ներքին մրցակցության բնույթը:

Այս գործոնները պայմանավորում են ազգային բիզնես միջավայրի ձևավորումը, որտեղ ընկերությունները հայտնվում և սովորում են մրցակցել: Շեղանկյան յուրաքանչյուր բաղկացուցիչ (**Նկար 2**), ինչպես և շեղանկյունը ամբողջությամբ, ցուցադրում են միջազգային ասպարեզում մրցակցային հաջողության հասնելու կարևոր տարրեր:


Այսպես մրցակցային առավելության պահպանման համար արտադրության գործոնը պետք է տվյալ ճյուղի կոնկրետ պահանջներին համապատասխան լինի խիստ մասնագիտացված: Դրանց ստեղծման համար անհրաժեշտ են ավելի երկարաժամկետ ներդրումներ: Մրցակցային առավելությունը իրենից ներկայացնում է միջազգային մակարդակի ինստիտուտների առկայության արդյունք, որոնք սկզբում ստեղծում են մասնագիտացված գործոններ (օր.՝ ծրագրային փաթեթներ), այնուհետև անընդհատ աշխատում են դրանց կատարելագործման վրա: Մյուս կարևոր բաղկացուցիչը ներքին շուկայում գնորդի կամ պահանջարկի բնույթն է: Ազգային ընկերությունները ստանում են մրցակցային առավելություն, եթե երկրի ներսում տվյալ ապրանքատեսակի կամ

Ծառայության գնորդները ամենախստապահանջ են կամ յուրահատուկ են. նրանք ստիպում են ընկերությանը պահպանել բարձր ստանդարտներ կամ մասնագիտանալ որոշակի սեգմենտներում: Տեղական գնորդները կարող են օգնել ազգային ընկերություններին ստանալ առավելություն, եթե նրանց պահանջմունքների բնույթը առաջ է անցնում (կանխում է) կամ նույնիսկ ձևավորում է այլ երկրների գնորդների պահանջմունքները:

Երկրի դրությունից և այնտեղի բիզնես միջավայրի պայմաններից մեծապես կախված է թե ինչպես կստեղծվեն, կկազմակերպվեն և կկառավարվեն ընկերությունները, ինչպես նաև ներքին մրցակցության բնույթը: Որոշակի ճյուղի մրցունակությունը հանդիսանում է երկրում գերակշռող կառավարման պրակտիկայի և մշակույթի, կազմակերպման ձևերի և տվյալ ճյուղում մրցակցային առավելության սկզբնական պատճառների համատեղման արդյունք: Մրցակցային առավելության համար կարևոր է նաև աշխատանքի և մասնագիտական ունակությունների բարձրացման հանդեպ անձնական մոտիվացիան: Տեղական ուժեղ մրցակիցների առկայությունը իրենից ներկայացնում է մրցակցային առավելության ստեղծման և պահպանման վերջին և ամենաուժեղ խթանիչը, քանի որ այն ունի ուժեղ ազդեցություն շեղանկյան մեջ ներկայացված մյուս տարրերի վրա: Ինչքան էլ այն պարադոքսալ է հնչում, հենց ներքին ուժեղ մրցակցությունն է ստիպում ընկերություններին դուրս գալ արտաքին շուկա և հասնել այնտեղ հաջողության: Տեղական մրցակիցները ստիպում են միմյանց իջեցնել գները, բարձրացնել որակը և սպասարկումը, և որ ամենակարևորն է դիմելու նորարարության և կատարելագործման:

Այս համատեքստում առանցքային քննարկման է ենթակա պետության ունեցած դերը երկրի մրցունակության ձևավորման և պահպանման հարցում: Չնայած բազմաթիվ և հաճախ հակասական պնդումների կառավարությանը վերապահված դերը կայանում է նրանում, որպեսզի նա ոգեշնչի և նույնիսկ ուղղորդի ընկերություններին հասնելու մրցակցության ավելի բարձր մակարդակների: Կառավարությունը չի կարող ստեղծել մրցունակ ճյուղեր, դա կարող են անել միայն ընկերությունները: Հաջողությանը տանող կառավարության քաղաքականությունը ստեղծում է միջավայր, որտեղ ընկերությունները կարող են հասնել մրցակցային առավելությունների:

**Նկար 2. Հայաստանի մրցունակության բնութագրերը ըստ "Ադամանդի" մոդելի**



\*Քլաստերները փոխկապակցված ղեկավարությունների, մասնագիտացված մատակարարների, ծառայությունների մատակարարների, հարակից ծյուղերի ֆիրմաների, իչպես նաև դրանց գործունեության հետ կապված կազմակերպությունների (օր.՝ համալսարաններ, ստանդարտացման հետ կապված գործակալություններ, առևտրային մջություններ) աշխարհագրորեն կենտրոնացած խմբեր են գործող որոշակի ոլորտներում, որոնք միաժամանակ և մրցակցում են, և համատեղ աշխատում:

«Աղանանդե» մոդելն առաջարկում է նաեւ վերջինիս կառուցման ուղղությունները եւ մեխանիզմները անցումային եւ զարգացող երկրների համար՝ հստակ շեշտադրելով յուրաքանչյուր բազադրիչի առաջնահերթությունները:

Այսպես, զարգացած հասնելու ճանապարհին **առաջնահերթ են համարվում արտադրության (գործունեների) պայմաններին ուղղված բարեփոխումները**: Այս մոտեցման տրամաբանությունն այն է, որ թեեւ մոդելի բոլոր չորս մասերը գտնվում են փոխկապակցվածության եւ փոխլրացման մեջ եւ հավասարապես կարելու են մրցունակ տնտեսություն ստեղծելու գործում, բայց ակնհայտ է, որ առանց վերոնշյալ պայմանների առկայության եւ շարունակական բարելավման մյուս բաղկացուցիչների դերակատարության արդյունքները միմիմալ են, իսկ մրցունակ տնտեսություն ստեղծելու հույսերը թվում են անիրականանալի:

Հայաստանում գործունային պայմանների տեսանկյունից թեեւ առկա իր որոշակի դրական կողմերին՝ կրթական մակարդակ, կրթական հաստատությունների հեղինակություն, բարելավվող ճանապարհային ցանց, շարունակում են գերակշռել այնպիսի թերություններ՝ ինչպիսիք են կապիտալի սահմանափակությունը, թերզարգացած ենթակառուցվածքը, կապիտալի շուկաները, կրթական համակարգի անհամապատասխանությունը շուկայի պահանջներին, առելտրային ուղիների սահմանափակությունը, տեխնոլոգիաների կախվածությունն արտաքին աշխարհից : Վերը նշվածը բերում է **ցածր արտադրողականության**, որը խեղաթյուրում է ազգային մրցունակության կոնցեպցիայի բուն գաղափարը, այն է՝ արտադրողականության բարձր մակարդակը բերում է բարեկեցության բարձր մակարդակի:

Այս դեպքում զարգացած տնտեսություն ունենալու հեռանկարներն ավելի հավանական են թվում հետեւյալ բարեփոխումների իրականացման դեպքում՝

- Բիզնես գործունեության համար հիմնական հաստատությունների հիմնում՝ ներառած հասարակական անվտանգության, կոմերցիոն ենթակառուցվածքի գործելու, բիզնեսի հետ կապված ինֆորմացիայի ապահովումը:
- Առկա գործունային պայմանների բարելավում եւ դրանց մասնակցության արդյունավետության բարձրացում՝ ներառած բնական ռեսուրսների գների ձեւավորումը եւ պահպանումը, ֆիզիկական ենթակառուցվածքի արդյունավետության բարձրացումը, աշխատաշուկայի արդյունավետության բարձրացումը, ազգային խնայողության մակարդակի աճի ապահովումը եւ ֆինանսական համակարգի ծավալումը:
- Ընդլայնել տեղական ռեսուրսների հասանելիությունը:
- Ուժեղացնել քլաստերներին յուրահատուկ գործոնների մասնագիտացումը՝ հասնելու դրանց զարգացման ավելի բարձր մակարդակների:

Ըստ անհրաժեշտ բարեփոխումների առաջնահերթության երկրորդ տեղում է ընկերությունների ռազմավարությանը եւ մրցակցությանը վերաբերող պայմանների բարելավումը: Այս համատեքստում Հայաստանին, ինչպես նաեւ բազմաթիվ այլ զարգացող երկրների սկզբնական շրջաններին բնորոշ է քաղաքական եւ տնտեսական անկայունության բարձր աստիճանը, բարձր կապիտալի ծախքերը եւ կարճաժամկետությունը, ընկերությունների պատեհապաշտական գործելակերպը, մրցակցության խեղաթյուրումը մոնոպոլիստական ճնշումներով եւ զգալի տնտեսական միջամտություններով, տեղական ընկերությունների պաշտպանումն օտարերկրյա մրցակիցներից, մոնոպոլիստական ընկերությունների գերիշխումը եւ շուկայի բաժանումը, եւ մրցակցության գնային բնույթը, ստվերային հատվածը:

Թեեւ նշված ոլորտներում առկա որոշակի տեղաշարժերին, որոնք հիմնականում օրենսդրական բնույթի են՝ ԱՀԿ-ին անդամակցության, «Օտարերկրյա ներդրումների մասին» օրենք, հակամենաշնորհային, փոքր եւ միջին բիզնեսի խթանում եւ այլն, սակայն դրանց **իրականացումը ոչ հետեւողական է**, իսկ բարելավումներին ուղղված **քաղաքականությունները ոչ համակարգային են**, անարդյունավետ են եւ չեն համապատասխանում զարգացման տվյալ մակարդակին: Այսուհանդերձ, Հայաստանի լրջագույն մրցակցային թերությունների մեծ մասը կապված է մասնավոր հատվածի գործունեության հետ, մասնավորապես ռազմավարության մշակման, կառավարման բոլոր գործառնական ոլորտների, տեխնոլոգիաների կիրառման եւ գործառնական արդյունավետության ապահովման տեսանկյունից:

Այս պարագայում զարգացած միջավայրի գրավականներն են՝

- Ստեղծել կոռուպցիայի նվազեցման բազմակողմանի մոտեցմամբ համակարգ՝ թափանցիկության ապահովում, հասարակական ծառայությունների բարեփոխումներ, պատժամիջոցների կիրառում:
- Կրճատել արտաքին **պետական միջամտությունը մրցակցությանը**, այն է՝ վերջ տալ մոնոպոլիա ստեղծող պետական ճնշումներին, վերացնել արհեստական մուտքի արգելքները եւ տեղակայման սահմանափակումները, որոնք, իհարկե, պետք է լինեն հետեւողական եւ ապահովագրվեն հակակշիռների մեխանիզմով:
- Օտարերկրյա մրցակցության եւ ներդրումների համար **բաց տնտեսության** ստեղծում ոչ միայն օրենսդրական, այլ նաեւ խթանման իրական մեխանիզմների կիրառմամբ՝ ինչպիսիք են արտասահմանում հատուկ գրասենյակների ստեղծումը: Կարելի է նաեւ կախվածության բացառումը միայն սփյուռքի ներուժից:
- Մտավոր սեփականության օրենսդրության կիրառման հանդեպ հետեւողականության բարձրացում:

Զնայած դրական միտումներին՝ խնդրահարույց եւ արգելակող են մնում շուկայում ներմուծվող ապրանքների գերիշխումը, ցածր միջին եկամտի մակարդակը, ինֆորմացիայի

աղավաղումը, կենտրոնացումը գնային պարամետրերի վրա: Առկա է նաև ապրանքների եւ ծառայությունների դիզայնի կրկնօրինակումը համանման արտասահմանյան արտադրանքին, ապրանքի, առողջության, անվտանգության եւ միջավայրի **ստանդարտների** մշակման եւ վերահսկման **անտեսումը**:

Պահանջարկի բնութագրերի հեռանկարային բարելավման միջոցառումներից են՝

- Կրճատել տեղական պահանջարկի թերությունները, այն է՝ ընդլայնել գնորդի ինֆորմացիան եւ մեծացնել նրա պաշտպանվածությունը ցածրորակ արտադրանք առաջարկողներից, վերացնել սահմանափակումները եւ հարկային բեռը «նոր» ապրանքների նկատմամբ:
- Բարձրացնել ապրանքի անվտանգության, առողջական եւ միջավայրային ստանդարտները՝ հասցնելով դրանք միջազգային մակարդակներին:
- Թիրախել այն հարեւան երկրներ եւ այլ երկրներ, որտեղ կարիքները նմանատիպ են:
- Ներդնել այլ ոլորտների ենթակառուցվածքի եւ հնտությունների զարգացման մեջ, որտեղ տեղական պահանջարկը ավելի հասուն է ի շնորհիվ պատմական, ավանդույթային, մշակութային եւ աշխարհագրական գործոնների:


Մոդելի կառուցումն ամբողջացնելու համար անհրաժեշտ է ապահովել նաև կից եւ աջակցող ճյուղերի համաչափ զարգացումը: Ջարգացման սկզբնական շրջանում այստեղ բնորոշ են մեկուսացված արտահանող ճյուղերը, ոչ մրցունակ եւ սակավ մատակարարները, հիմնական առաջատար մեքենաները, բաղադրամասերը, սարքավորումները եւ ծառայությունները ներմուծվում են, թեւ կան փոքր թվով նորահայտ քլաստերներ (ադամանդ, SS, գյուղատնտեսական ապրանքներ), բայց դրանք հիմնականում թույլ են եւ ոչ խորը, ստեղծվում են անարդյունավետ ուղղահայաց ինտեգրումներ, որի պատճառն է ներմուծման արգելքները (ֆորմալ եւ ոչ ֆորմալ) եւ մատակարարների առկայությունը: Սրա արդյունքն են կարճաժամկետ հաջողությունները արտահանման մեջ եւ թույլ ներարտադրական կապերը:

Մեկուսացման վերացման եւ բիզնես սուբյեկտների միջեւ կապերի ընդլայնման համար անհրաժեշտ պայմաններն ու քայլերն են՝

- Առաջատար սարքավորումների, մեքենաների, ծառայությունների օտարերկրյա մատակարարների մուտքի խթանում (արտոնյալ պայմաններ, հումք, տեխնոլոգիա ներմուծողներին):
- Աճեցնել ներգրավված անդրազգային ընկերություններն սպասարկող միջազգային կարգի մատակարարներ՝ աջակցելու եւ խորացնելու զարգացող տեղական քլաստերներին:
- Մշակել ծրագրեր տեղական մատակարարման շղթաների օպտիմալացման համար:

Այստեղ հեռահար նպատակ է կառուցել լավ զարգացած քլաստեր, որը էապես կբարձրացնի ընդհանուր արտադրողականությունը՝ հետևաբար և բարեկեցություն մակարդակը:

Վերոնշյալ բոլոր միջոցառումները իրենց մեջ ընդգրկում են բիզնես մրցունակության բոլոր բաղկացուցիչները, ինչպես միջավայրի, այնպես էլ ընկերության գործունեության հետ կապված բնութագրերը, հետևաբար դրանց հետևողական իրականացման երկարաժամկետ կտրվածքով կապահովվի ցուցանիշի աստիճանական բարելավում: Անցկացվող բարեփոխումներում մեծապես կարելի է մասնավոր հատվածի մասնակցությունը, քանի որ միայն համատեղ ջանքերի շնորհիվ է հնարավոր որոշել առկա հիմնախնդիրները, դրանց լուծման նախապատվությունները եւ լծակները, եւ յուրաքանչյուր կողմի ունեցած դերակատարությունը: Դրա համար անհրաժեշտ է յուրաքանչյուր ոլորտի համար ստեղծել մասնագիտացված գործակառույցներ, որոնք կգբաղվեն այդ ոլորտների համար զարգացման ռազմավարական ծրագրերի մշակմամբ եւ դրանց իրականացման համար կողմերի գործունեությունների կոորդինացմամբ: Ստորել ներկայացվում է մրցունակության կառուցման համար պետական եւ մասնավոր հատվածի առաջնահերթ քայլերի ամփոփ պատկերը.



Անփոփելով կարելի է փաստել, որ բիզնես միջավայրի թերությունները՝ զուգորդված ինստիտուցիոնալ (հասարակության վստահության ցածր աստիճան, պետական ինստիտուտների չափազանց կենտրոնացվածությունը, մասնավոր ինստիտուտները կամ թույլ են, կամ նրանց կառուցվածքը չի նպաստում տնտեսական զարգացմանը) թերություններով մրցունակության բարելավմանը խոչընդոտող գլխավոր հիմնախնդիրներից են: Պետք է նշել, որ յուրաքանչյուր երկրի տնտեսական առանձնահատկությունները եւ զարգացման մակարդակը պայմանավորում են առաջարկվող միջոցառումների համակցման տարբերությունը: Բայց բոլոր դեպքերում կարելորն այն է, որ բարեփոխումների նկատմամբ կիրառվի համակարգային մոտեցում, այսինքն՝ մակրոտնտեսական տարրերի բարելավումը պետք է զուգակցվի եւ հիմնվի միկրոմակարդակում համապատասխան փոփոխություններով. ստրատեգիաները, որոնք ուղղված են մրցունակության մի տարրին կամ նույնիսկ դրանց որոշակի կատեգորիային, սահմանափակ մասնակցություն են ունենում գումարային աճին: Այդ իսկ պատճառով մեծապես կարևորվում է առկա բոլոր հիմնախնդիրների բացահայտումը և դրանց լուծման գործընթացում հնարավորինս շատ շահագրգիռ կողմերի ներգրավումը:

## ARMENIAN BUSINESS COMPETITIVENESS

*The importance of increasing competitiveness in economic development , today's state of Armenian business competitiveness, the reasons of aggravation in business competitiveness position, the essence of necessary improvements and consecution of their implementation, and also the importance of public-private sector collaboration in that process.*

**Key words:** *business competitiveness, national business environment, «Diamond» model, cluster, competitive advantage.*

### Գրականության ցանկ

1. Հայաստանի ներդրումային քաղաքականության ռազմավարություն:
5. Porter M. Competitiveness- M-SP6-Kiev: Williams, 2005-2006
3. The Global Competitiveness Report 2007-2008. World Economic Forum Geneva, Switzerland 2007, p. 108.